ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ք Ա Ջ Ա Ր Ա Ն

2020

Նախաբան

Հարգելի քաջարանցիներ

Համայնքի զարգացման ծրագրերում մենք համատեղ սահմանել ենք այն ապագան, որ ուզում ենք ունենալ մեր համայնքի համար: Այդ ապագան կառուցելը նույնպես մեր բոլորի համատեղ աշխատանքի արդյունքով պետք է լինի:

Համայնքի բնակիչների համար բարձր կենսամակարդակ ապահովելու նախապայմաններից մեկը համայնքում բազմաբնույթ, գործուն և աշխույժ տնտեսություն ունենալն է:

Համայքի կայուն զարգացման համար նախադրյալների ստեղծումը, գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը համայնքի պարտադիր խնդիրներից է, և համայնքապետարանը կոչված է լուծելու այդ խնդիրները: Այս խնդիրներին արդյունավետ և իրատեսական լուծումներ գտնելու ակնկալիքով Քաջարանի համայնքապետարանը 2017թ. միացել է ԵՄ «Համայնքապետեր հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը: Ձեր ուշադրությանը ներկայացված՝ Տեղական տնտեսական զարգացման ծրագիրը մշակվել է այդ նախաձեռնության շրջանակներում և կոչված է նպաստելու համայնքապետարանի՝ համայքը ապրելու համար հարմարավետ և գործարարության համար գրավիչ դարձնելու ջանքերին:

Համայնքապետարանը կշարունակի համագործակցությունը «Նախաձեռնության» հետ և հետևողական կլինի մշակված ծրագիրը տրամաբանական ավարտին հացնելու գործում:

Համայնքի ղեկավար՝ Մանվել Փարամազյան

Պլանի օրինակն ստանալու համար, խնդրում ենք կապ հաստատել.

Անուն՝ Գարեգին Գաբրիելյան

Պաշտոն՝ Քաջարանի համայնքապետարան, ծրագրերի բաժնի պետ, ՏՏԶ պատասխանատու

Հասցե՝ Սյունիքի մարզ, ք.Քաջարան, Լեռնագործների 4

Հեռախոս՝ 094629499

Էլ հասցե՝ garegin8gabrielyan@gmail.com

Կայք՝ www.kajaran.am

1. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Քաջարան քաղաքը հանրապետության լեռնահանքային արդյունաբերության խոշոր կենտրոն է. այստեղ է գտնվում հանրապետության ամենամեծ ձեռնարկություններից մեկը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Վերջնական արտադրանքը պղնձի և մոլիբդենի խտանյութն է, որը մեծ մասամբ արտահանվում է: Կոմբինատն ապահովում է համայնքային տնտեսության համախառն արդյունքի 90%-ից ավելին: Այս կարգի խոշոր ձեռնարկության առկայությունը համայնքի ամենաուժեղ կողմերից մեկն է, բայց միևնույն ժամանակ այն նաև մարտահրավեր է համայնքի լիարժեք, հավասարաչափ և կայուն զարգացմանը:

Համայնքը այլ ուժեղ կողմեր և հեռանկարային հնարավորություններ ունի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացումը ևս ապահովելու համար. բարձր արժեք ներկայացնող բնական լանդշաֆտներ և հարուստ անտառային կենսաբազմազանություն, ալպիական արոտավայրեր և խոտհարքներ, պատմական հուշարձաններ, տարածաշրջանին առնչվող պետական խոշոր ծրագրերի առկայություն (Հյուսիս – հարավ մայրուղու կառուցում, պոչամբարներում կուտակված պոչանքների վերամշակման ծրագիր) և այլն:

Փոքր և միջին բիզնեսի զարգացման ուղղված այս ծրագիրը կուժեղացնի համայնքի տնտեսության բազմազանացմանը միտված համայքի գործողությունները:

Համայնքի տեսլականն է՝

Քաջարանը բնության վրա նվազագույն բացասական ազդեցություն ունեցող, բարձր տեխնոլոգիական հանքարդյունաբերություն, զարգացող փոքր և միջին ձեռնարկու¬թյուններ, էկոհա¬մա¬կարգային ծառայություններ մատուցող բազմաբնակավայր համայնք է, որտեղ մարդիկ կարող են գտնել արժանապատիվ աշխատանք և զբաղմունք, ապրում են հարմարավետ և առողջության համար անվտանգ բնակավայրերում:

Գլխավոր նպատակներն են՝

1. Համայնքային գույքի և ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը և դրանց վերաբերյալ տվյալների պոտենցիալ ներդրողների համար մատչելիության ապահովում
2. Փոքր և միջին ձեռներեցության ակտիվության աճ, հատկապես կանանց և երիտասարդների շրջանում
3. Նպաստել գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների զարգացմանն ու աճին:

Այս նպատակներին հասնելու համար նախատեսում ենք իրականացնել հետևյալ գործողությունները՝

Ստեղծել համակարգչային ինտերակտիվ տեղեկատվական հարթակ համայնքի հաշվառված և գնահատված ռեսուրսների, գույքի, հնարավորությունների և բիզնես միջավայրի վերաբերյալ,

Կրթության միջոցով բարձրացնել երիտասարդների գործարար ունակություններն ու կարողությունները,

Իրազեկման, համախմբման և մասնագիտական վերապատրաստումների միջոցով ուժեղացնել համայնքի գյուղացիական տնտեսությունները:

2. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ամփոփագիր 3
2. Բովանդակություն 4
3. Աղյուսակների, գծապատկերների և հապավումների ցանկ 5
4. Պլանի ներածություն 6
5. Տեղական տնտեսական զարգացման պլանի մշակման գործընթացը 7
6. Տեղական տնտեսության վերլուծություն 8
7. SWOT վերլուծություն 13
8. Տեսլական և նպատակներ 14
9. Գործողությունների ծրագիր 15
11. Ֆինանսավորման սխեմա 18
10. Մոնիտորինգի և վերահսկողության մեխանիզմներ 20

Հավելված 2. ՏՏԶ պլանի մշակման գործընթացում շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների ցանկ 22
Հավելված 3. ՏՏԶ պլանի մշակման աշխատանքային խումբ 22

3. ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ, ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ և ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՇԲ	-	Արդշինբանկ
ԱՏՀ	-	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ
ԲՏ	-	Բարձր տեխնոլոգիաներ
ԵՄ	-	Եվրոպական Միություն
ԶՊՄԿ	-	Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ
ՀԶՀԾ	-	Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր
ՀԷԿ	-	Հիդրոէլեկտրակայան
ՀԿ	-	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	-	Հայաստանի Հանրապետություն
ՇՄՊՏԳԾ	-	Շրջակա միջավայրի պաշտպանության տեղական գործողությունների ծրագիր
ՏԻՄ	-	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓԲԸ	-	Փակ բաժնետիրական ընկերություն
ՔՍԳ	-	Քաղաքացիների սպասարկման գրասենյակ
Աղյուսակ 1	-	ՈՒԹՀՍ վերլուծություն
Աղյուսակ 2	-	Գործողությունների պլան
Աղյուսակ 3	-	Ֆինանսավորման սխեմա
Աղյուսակ 4	-	Մոնիտորինգի ցուցանիշներն ու մեխանիզմները
Հավելված 1	-	Գործընկերության կազմ
Հավելված 2	-	ՏՏԶ պլանավորման ընթացքում իրականացված հանդիպումների ցանկ

4. ՊԼԱՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քաջարան քաղաքը հանրապետության լեռնահանքային արդյունաբերության ամենամեծ կենտրոնն է. այստեղ է գտնվում աշխարհի պղնձամոլիբդենային խոշորագույն հանքավայրերից մեկը: Հանքավայրը շահագործվում է 1952թ.-ից, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) կողմից: Քաղաքի կառուցումը, զարգացումը և ապագան ուղղակիորեն կապված է հանքավայրի շահագործման (ԶՊԿ գործունեության) հետ: Ստեղծման օրվանից ԶՊՄԿ-ն, իր գործունեության բնույթով, մասշտաբներով ու ծավալներով պայմանավորված, գերակա ու թելադրող դիրք է ունեցել համայնքի տնտեսության համակարգում:

Խորհրդային տարիներին քաղաքում այլընտրանքային աշխատատեղեր ապահովելու նպատակով, (հատկապես՝ կանանց ու ոչ լեռնային մասնագիտություն ունեցողների համար), այլ գործարաններ էին կառուցվել. տրիկոտաժի, ռադիոտեխնիկական՝ ռելեի ու կոնդենսատորների և այլն: ԽՍՀՄ փլուզումից հետո այդ գործարանները փակվել են մինչ այդ պահը գործող տնտեսական կապերի քայքայման պատճառով:

Համայնքի համալիր և կայուն զարգացման հիմնախնդիրը համայքի տնտեսության միաբևեռ լինելն է. զբաղվածություն ունեցող բնակչության 80%-ից ավելին աշխատում են ԶՊՄԿ-ում: Աշխատանք փնտրողները ևս ցանկանում են աշխատանք գտնել ԶՊՄԿ-ում:

2017թ-ին համայնքների խոշորացումն գործընթացի արդյունքում Քաջարանին միացան մոտակա չորս գյուղական համայնքները: Այս գյուղական համայնքներում մինչև ԽՍՀՄ փլուզումը գյուղական կոլեկտիվ և պետական տնտեսություններ էին գործում և մեծ ներդրում էին ապահովում համայնքի տնտեսության համախառն արդյունքում: Այդ տնտեսությունների քայքայումից հետո տարածքի գյուղատնտեսությունը կորցրեց իր արտադրական նշանակությունը. փոքր լեռնային գյուղերում մնացին մանր ընտանեկան ֆերմերային տնտեսություններ՝ մթերքների արտադրության փոքր ծավալներով: Հետևանքը՝ մշակվում են վարելահողերի ընդամենը 40%-ը: Գյուղական բնակավայրերի կյանքը ևս սերտորեն կապված է ԶՊՄԿ գործունեության հետ. աշխատող գյուղացիների մեծ մասը ոչ գյուղատնտեսական զբաղվածություն ունի:

Համայնքի տնտեսությունը, թեկուզ փոքր մասշտաբներով, դիվերսիֆիկացման անհրաժեշտություն, ունի, հատկապես՝ փոքր և միջին բիզնեսը զարգացնելու միջոցով: Այն թույլ կտա զբաղվածություն ապահովել կանանց և երիտասարդների, ոչ լեռնահանքային մասնագիտություն ունեցողների համար: Բիզնեսի զարգացումը կնվազեցնի երիտասարդների արտահոսքը և կայուն զարգացման նախադրյալներ կապահովվի համայնքի հատկապես գյուղական բնակավայրերի համար:

Խոշորացումից հետո համայնքը տարածքի և ռեսուրսների առումով նոր, հեռանկարային հնարավորություններ ստացավ նորարար գաղափարներով բիզնեսի զարգացումը խթանելու համար:

Բիզնեսի զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու ու համայքը տարբեր զբաղմունք, հետաքրքրություններ ունեցող մարդկանց ապրելու ու գործելու համար գրավիչ դարձնելու գաղափարն է «Համայնքապետեր հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը միանալու դրդապատճառը. սա ընձեռված մի նոր և ուժեղ հնարավորություն է համայնքի տեսլականը իրականություն դարձնելու ճանապարհին:

Համայնքի տեսլականը ամրագրված է նաև Համայնքի կապիտալ զարգացման ծրագրում, և տնտեսական զարգացման ծրագիրը այն լրացնող, ավելի լիարժեք դարձնող նշանակություն կունենա, ինչպիսին հանդիսանում է նաև «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագիրը» (ՇՄՊՏԳԾ):

Համայնքում առկա տնտեսական խնդիրների ճիշտ հասցեավորման, այդ խնդիրների իրատեսական լուծումներ գտնելու նպատակով ձգտել ենք հնարավորինս շատ շահագրգիռ կողմեր ներգրավել ծրագրի մշակման գործընթացին:

5. ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՏՏԶ պլանի մշակման գործընթացն իրականացնելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ներգրավելով ՏԻՄ-ի, ՔՀԿ-ի, ավագանու անդամների, գործարարների: Աշխատանքները համակարգել է Քաջարան համայնքի ՏՏԶ պատասխանատու Գ. Գաբրիելյանը:

Պլանի մշակման գործընթացի շրջանակում առանձին քննարկումներ են կազմակերպվել միկրո (խանութներ, հասարակական սննդի, կենցաղսպասարկման կետեր), փոքր (հյուրանոցներ,սննդի, կահույքի և այլ արտադրամասեր), միջին և խոշոր (ֆինանսական կառույցներ, պետական կազմակերպություններ, հյուրանոցներ, ԶՊՄԿ) ձեռնարկությունների, ինչպես նաև գյուղացիական տնտեսություններ վարողների հետ: Կազմակերպվել է 5 աշխատանքային հանդիպումներ, մասնակցել են 100-ից ավել համայնքի բնակիչներ: Հատուկ ուշադրության ենք դարձրել այն դրսի այն կազմակերպություններին, որոնք ցանկություն ունեն բիզնես բերել համայնք, հատկապես՝ տուրիզմի ոլորտում:

Քննարկումների արդյունքում վեր են հանվել բիզնեսի զարգացմանը խոչընդոտող խնդիրները, սահմանել ենք համայնքի տնտեսական զարգացման ռազմավարական խնդիրները, նպատակները: Մշակվել է պարբերաբար հանդիպումների ժամանակացույց:

6. ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

6.1 Տեղական տնտեսության կառուցվածքի վերլուծություն

Քաջարան խոշորացված համայնքը կազմավորվել է 2017թ.՝ Քաջարան քաղաքային և Քաջարանց, Լեռնաձոր, Գեղի, Նոր Աստղաբերդ գյուղական համայնքների միավորմամբ: Համայնքի կենտրոնը Քաջարան քաղաքն է: Համայնքը ընդգրկում է 21 բնակավայր, որոնցից խոշորներն են՝ Քաջարան քաղաքը, Քաջարանց, Լեռնաձոր, Բաբիկավան, Գեղի գյուղերը: Բնակավայրերից 8-ը մշտական բնակչություն չունեն:

Վարչականորեն գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի հարավ- արևմտյան մասում: Կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25կմ է, Երևանից՝ 330կմ, Իրանի սահմանից՝ 50կմ: Սահմանակից է Կապան, Սիսիան, Տաթև, Մեղրի համայնքներին:

Աշխարհագրորեն համայնքը գտնվում է ՀՀ հարավ-արևմուտքում, Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան ճյուղավորումների, Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լեռնաբազուկների վրա: Տարածքն ընդգրկում է Ողջի գետի վերին ավազանը և Գեղի գետի ավազանն ամբողջությամբ: Ամենաբարձրադիր բնակավայրի բարձրությունը ծովի մակարդակից՝ 2050մ է, ամենացածրադիր բնակավայրինը՝ 1230 մ:

Համայնքի կենտրոն Քաջարան քաղաքը կառուցված է Ողջի գետի երկու բարձրադիր ափերին, բավականին նեղ աստիճանաձև սարավանդի վրա:

Հողերի ընդհանուր մակերեսը՝ 58,2 հազ հա, որից գյուղատնտեսական՝ 38,8 հա (167 հա՝ վարելահող), անտառային՝ 8,7 հազ, 1,1 հազ՝ արդյունաբերական:

2017թ նոյեմբերի 1-ի դրությամբ համայնքի մշտական բնակչությունը կազմել է 8145 մարդ, որից 7000-ը Քաջարան քաղաքի բնակչությունն է: Աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության 57%-ը (մոտ 4650 մարդ), որից 23%-ը աշխատանք չունեն: Աշխատանք չունեցողների գերակշռող մասը կանայք են, քանի որ կանանց համար նախատեսված աշխատատեղերը քիչ են: Աշխատողների 75%-ը զբաղված են լեռնահանքային արդյունաբերությունում (ԶՊՄԿ ՓԲԸ աշխատակիցներն են), 10% -ը՝ մասնավոր այլ ձեռնարկություններում և գյուղատնտեսությամբ, 15%-ը՝ պետական և համայնքային կառույցներում:

Համայնքի տարածքի տնտեսական յուրացման, արտադրա - տնտեսական համակարգի կազմակերպման որոշիչը աշխարհի խոշորագույն պղնձամոլիբդենային հանքավայրերից մեկի՝ Քաջարանի հանքավայրի առկա-յությունն է: Քաջարան քաղաքը հանրապետության լեռնահանքային արդյունաբերության խոշորագույն կենտրոնն է. այստեղ է գտնվում Քաջարանի պղինձ – մոլիբդենային հանքավայրը շահագործող Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Կոմբինատի վերջնական արտադրամքը պղնձի և մոլիբդենի խտանյութն է:

Համայնքի բյուջեի եկամտային մասի մոտ 50%-ը ձևավորվում է ԶՊՄԿ-ի կողմից կատարվող վճարումներից: Համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում ԶՊՄԿ-ն համայնքի բյուջեի 20%-ի չափով սոցիալական ներդրումներ է իրականացնում համայնքի զարգացման գործին:

Հանքավայրում առկա հանքաքարի պաշարները շահագործման ներկա ծավալների պահպանման դեպքում առնվազն 50 տարվա գործունեություն կապահովի ԶՊՄԿ-ի համար, ինչը դրական ազդեցություն կարող է ունենալ կազմակերպության և համայնքի զարգացման դինամիկայի վրա:

ԶՊՄԿ-ի կողմից աշխատակիցներին վճարվող աշխատավարձը անհամեմատ բարձր է համայնքում գործող այլ կազմակերպությունների կողմից վճարվող աշխատավարձից, ինչը ընդհանուր առմամբ դրական լինելով հանդերձ որոշակի խոչնդոտներ է ստեղծում տնտեսության այլ ճյուղերի զարգացման համար. աշխատանք փնտրողները ձգտում են ԶՊՄԿ-ում աշխատանք գտնել (թեկուզ ոչ մասնագիտական), իսկ այլ ոլորտներում աշխատանք առաջարկողները չեն կարող համադրելի աշխատավարձ ապահովել:

Համայնքի տնտեսության միաբևեռ բնույթը բացասաբար է անդրադառնում աշխատաշուկայի որակական և մասնագիտական ցուցանիշների վրա. ոչ լեռնահանքային մասնագիտություն ունեցողները, հատկապես երիտասարդները, հեռանում են համայնքից իրենց ընտրած մասնագիտությամբ այլ համայնքներում աշխատանք գտնելու ակնկալությամբ:

ԶՊՄԿ-ին մատակարարումներ իրականացնող կամ ծառայություններ մատուցող կազմակերպություններ համայնքում քիչ կան. Այս հնարավորությունը քիչ է իրացված համայնքում և այս ուղղությամբ ուսումնասիրություններ ու աշխատանքներ կատարելու կարիք կա:

Տարածաշրջանում առկա հարուստ հանքային ռեսուրսները (պղնձամոլիբդենային, բազմամետաղային, ոսկու և

այլն) համայքի տնտեսությունը երկար ժամանակաընթացքի համար կկողմնորոշեն դեպի լեռնահանքային արդյունաբերություն՝ սրանից բխող դրական և բացասական հետևանքներով:

Բացի Քաջարանի հանքավայրից, համայնքի տարածքում այլ հանքավայրեր ևս կան (ոսկու, պղինձ-մոլիբդենային, բնական շինանյութերի), որոնցից որոշների շահագործման համար թույլտվություններ են տրված տարբեր կազմակերպությունների:

Լեռնահանքային արդյունաբերությունից հետո տնտեսության մյուս համեմատաբար գործուն ճյուղը շինարարությունն է, հատկապես՝ արդյունաբերական, կապված հանքարդյունաբերության ընդլայնման հետ:

Վերջին տարիներին 7 փոքր ՀԷԿ-եր են կառուցվել Գեղի և Ողջի գետերի և նրանց վտակների վրա:

Չնայած գյուղական բնակավայրերի առկայությանը, գյուղատնտեսությունը արտադրական նշանակություն չունի: Հողագործությունն ու այգեգործությունը դրսևորված են տնամերձ տնտեսություններով. Վարելահողերը կազմում են գյուղատնտեսական հողերի 0,4 % -ը (167 հա), որի միայն 40%-ն է մշակվում: Վերջին 20 տարում նվազել է անասնապահությունը: Գյուղատնտեսության անկման պատճառներից են հասարակական կացութաձևի փոփոխությունը, տնտեսության այլ ոլորտներում տղամարդկանց զբաղվածության բարձր մակարդակն ու բնակլիմայական պայմանները:

Համայնքում գործող երեք նախադպրոցական հաստատություններից մեկն է համայնքային: Մյուս երկուսը ԶՊՄԿ ՓԲԸ ենթակայության են: Սաների թիվը՝ 305: Համայնքային ենթակայության է նաև արվեստի դպրոցը: Արհեստագործական ուսումնարանն ու մանկապատանեկան մարզադպրոցը հանրապետական ենթակայության են:

Համայնքում գործում են նաև յոթ հանրակրթական դպրոցներ, որոնցից 5-ը միջնակարգ, 2-ը՝ հիմնական: Աշակերտների թիվը՝ 1130:

Համայնքի 4 բնակավայրերում գործում են հանրային գրադարաններ:

Քաջարան քաղաքում առկա մշակույթի պալատը ԶՊՄԿ ՓԲԸ ենթակայության է:

Քաջարանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային, պոլիկլինիկական և շտապ օգնության ծառայությունները 2014թ միավորվել են մեկ՝ վերանորոգված և վերազինված պոլիկլինիկայի մասնաշենքում: Համայնքի բնակավայրերում գործում են բժշկական կենտրոններ:

Խմելու ջրի մատակարարման, կոյուղու ծառայությունները իրականացնում է «Քաջարանի համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ն: Ջրամատակարարման և կոյուղու համակարգերը համայնքային սեփականություն են: Գազի բաշխման ներհամայնքային ցանցը ևս համայնքային սեփականություն է, որը տրված է Գազպրոմ-Արմենիա կազմակերպությանը անհատույց շահագործման:

Համայնքում գործում են երեք բանկերի մասնաճյուղեր՝ ԱՇԲ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱՄԵՐԻԱԲԱՆԿ, մեկ վարկային և երեք ապահովագրական ընկերություններ:

Կապի ծառայություններ մատուցող կազմակերպություններից Քաջարանում գործում են Վիվասել -ի, Յուքոմի, Ռոստելեկոմի, Բիլայնի, Հայփոստի մասնաճյուղերը, տեղական կաբելային հեռուստատեսություն: Կան գրանցված երկու տաքսի ծառայության կազմակերպություններ:

Համայնքում առկա է երեք հյուրանոց, որոնցից մեկը պատկանում է ԶՊՄԿ ՓԲԸ-ին և սպասարկում է հիմնականում ԶՊՄԿ ՓԲԸ կարիքները: Մեկը բացվել է 2019թ., Անդոկավան բնակավայրում:

Հանրային սննդի 15 օբյեկտներից հինգը ռեստորաններ են, մյուսները՝ արագ սննդի կետեր:

Համայնքում գործում է 105 մանրածախ առևտրի և 15 կենցաղսպասարկման կետեր, որոնցում զբաղվածների թիվը կազմում է մոտ 165 մարդ:

Ընդհանուր առմամբ համայնքում առկա են մեկ խոշոր, 5 միջին, 8 փոքր և 135 միկրո ձեռնարկություններ:

Չնայած խոշոր հանքավայրի առկայությանը, համայնքը էկոհամակարգային ծառայությունների մատուցման (ալպիական մարգագետիններ, բնական գեղատեսիլ լանդշաֆտներ, հարուստ կենսաբազմազանություն, բարձրլեռնային լճեր, «Զանգեզուր արգելավայր» և այլն) և տարանցիկ պատմամշակութային տուրիզմի զարգացման մեծ պոտենցիալ ունի, ինչը, սակայն, համայնքում իրացված չէ:

6.2 Տեղական համագործակցություն

Հանրային և մասնավոր հատվածների գործակցության բացակայությունն առանցքային խնդիր է հանդիսանում համայնքի տնտեսական զարգացման, և ընդհանուր առմամբ բնակչության կենսամակարդակի բարձրացման ընդհանուր ջանքերի համատեքստում: Արժևորման կարիք ունի բուն համագործակցության գաղափարը՝ որպես կայուն զարգացման գործոն, և չօգտագործված է մնում երկխոսության ներուժը՝ փոխադարձ վստահության մակարդակի բարձրացման միջոցով առավել լեգիտիմ դարձնելու մասնակից կողմերին:

Համայնք-մասնավոր հատված համագործակցությունը լավ է դրսևորված հատկապես համայնքի բնակավայրերի բարեկարգման ոլորտում. համայնքում գործող կազմակերպությունները իրենց սոցիալական պարտավորությունների շրջանակներում, ինչպես նաև կամավոր հիմունքներով ակտիվորեն մասնակցություն են ունենում բարեկարգմանն ուղղված աշխատանքներում:

Իրավիճակի բարելավման համար հնարավոր քայլերն են՝ գործարար տեղեկատվության տրամադրման առցանց հարթակի ստեղծումը, գործարար հատվածի աջակցության կառույցների հետ միասին մշտական գործող ոլորտային խորհրդակցական մարմինների գործարկումը՝ ընդգրկելով տնտեսական դերակատարներին, համագործակցային ծրագրերի խթանումը, սոցիալական ձեռնարկատիրության արմատավորումը, բիզնես ծրագրերի հանրային օգտակարության գնահատման և շարունակական վերահսկողության գործիքների կիրառումը, միևնույն ոլորտի տարբեր կառույցների միջև համագործակցության խթանումը:

6.3 Բիզնեսին աջակցող, թափանցիկ և առանց կոռուպցիայի վարչարարություն

Համայնքի բնակիչների, գործարար հատվածի արդյունավետ և որակյալ կենսագործունեության համար նպաստավոր միջավայրի ստեղծումը ՏԻ մարմինների կարևոր խնդիրներից մեկն է: Միայն համայնքապետարանի և ավագանու տեսանելի, թափանցիկ, ներառական գործունեությունը կարող է տեղական մարմինների նկատմամբ հավատ և վստահություն ներշնչել համայնքի բնակիչներին և ապահովել համատեղ ջանքերի ներդրում համայնքում որակյալ և արժանապատիվ կյանքի միջավայր ձևավորելու համար:

Համայնքապետարանը հանձնառու է իր իրավասությունների շրջանակներում ապահովել հավասար և արդար պայմաններ բիզնեսի համար: Ստեղծված ՔՍԳ – ն մեկ աստիճան բարձրացրել է մատուցվող ծառայությունների որակը՝ խնայելով ծառայություն ստացողների ժամանակն ու ապահովելով նրանց հարմարավետությունը: Առևտրի և շինարարության ոլորտում թույլտվությունների տրման ժամկետը հնարավորինս փոքրացվում է: Համայնքապետարանի կողմից կազմակերպվող գնումների և աճուրդների մասին հայտարարությունները հրապարակվում են համայնքապետարանի կայքում, փակցվում են հայտարարությունների տախտակին: Առևտրի և հանրային սննդի կետերում իրականացվող ստուգումները կատարվում են սահմանված կարգի պահպանմամբ և բոլորի նկատմամբ հավասար ու արդար սկզբունքով:

Բիզնեսի զարգացման և աջակցության պետական ծրագրերի, միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող դրամաշնորհների, ֆինանսական այլ աղբյուրների մասին տվյալներ կամ դրանց մասին հղումներ են պարբերաբար տեղադրվում համայնքի կայքում և ֆեյսբուքյան էջում:

Համայնքում ստեղծվել է բավարար պայմաններ իրազեկ լինելու համայնքային ժողովների և հանրային քննարկումների մասին, մասնակցելու և ներկայացնելու առաջարկներ: Այդ նպատակով օգտագործվում է համայնքային պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան էջը: 2020թ. կկազմակերպվի համայնքի ավագանու նիստերի առցանց հեռարձակումը:

Գործարար համայնքը պասսիվություն է դրսևորում համայնքի զարգացմանը վերաբերող, իրենց պահանջների, խնդիրների առաջադրման հարցերում:

6.4 Ֆինանսական միջոցների հասանելիություն

Համայնքային կենտրոնում գործում են երեք բանկերի և մեկ վարկային կազմակերպության մասնաճյուղեր: Ֆինանսական կազմակերպությունների ավելի շատ մասնաճյուղեր են գործում մարզկենտրոն Կապանում, որը համայնքային կենտրոնից հեռու է ընդամենը 25 կմ, իսկ համայնքի որոշ բնակավայրերից՝ 12 կմ: Առկա բարեկարգ ճանապարհներն ու մատչելի երթուղային տրանսպորտը ապահովում են այդ կազմակերպությունների բոլոր գրասենյակների ֆիզիկական հասանելիությունը համայնքի բնակիչների համար. անհրաժեշտության դեպքում բնակիչները կարող են դիմել նաև այդ կազմակերպություններին:

Ֆինանսական կազմակերպությունները բիզնես վարկեր են առաջարկում ընդհանուր հիմունքներով և պայմաններով. արտոնություն կամ այլ հատուկ մոտեցում չի կիրառվում համայնքի բնակիչների համար՝ որպես հեռավոր, բարձրլեռնային կամ սահմանամերձ համայնք:

Բիզնես վարկերի տոկոսադրույքները բարձր են: Բացառություն են կազմում պետական ծրագրերով սուբսիդավորվող վարկատեսակները. գյուղատնտեսական, զբոսաշրջային, ԲՏ և այլ ոլորտներում:

Ֆինանսական կազմակերպություններից ստացված տվյալների համաձայն բիզնես վարկեր ստանալու դիմումները շատ քիչ են: Այս իրավիճակը կապված է մի քանի հանգամանքների հետ.

1. Բնակիչների մոտ ձեռներեցության ջիղի և գործարարության հետաքրքրությունների պակաս, կապված համայնքում կայուն և համեմատաբար բարձր վարձատրությամբ աշխատատեղի առկայության հետ («հեշտ» փողի սինդրոմ):
2. Առաջարկվող վարկերի բարձր տոկոսադրույքներ:
3. Վատ իրազեկվածություն ու թույլ գործարար ունակություններ:

6.5 Հող և ենթակառուցվածքներ

Համայնքում առկա արտադրական, գրասենյակային, պահեստային և այլ նշանակության աշխատանքային տարածքները (որոնց մեծ մասը սեփականաշնորհված են), հողերը, ենթակառուցվածքները հաշվառված, գնահատված ու արժեվորված չեն: Այս հանգամանքը խանգարում է համայնքային գույքի կառավարման որակյալ և արդյունավետ պլան մշակելուն:

Հաշվառված ու գնահատված չեն նաև համայնքում առկա ռեսուրսները (հանքային, ռեկրեացիոն, էկոլոգիական, աշխատանքային և այլն), ինչը խանգարում է արտաքին աշխարհին ճիշտ ներկայանալուն և բիզնեսին ճիշտ ազդակներ հղելուն:

Սեփականաշնորհված տարածքների մի մասը պարապուրդի են մատնված՝ չեն օգտագործվում սեփականատերերի կողմից: Երկար ժամանակ չշահագործվելու պատճառով չափազանց մաշվել են և հավելյալ մեծ ներդրումներ են պահանջում դրանք աշխատանքային տեսքի բերելու համար:

Բարդ ռելիեֆի պատճառով գյուղատնտեսական նշանակության հողերի տարածքները կտրտված են և փոքր մակերեսներ ունեն, ինչը խոչընդոտում է գյուղական տնտեսությունների զարգացմանը: Բացառություն են կազմում ալպիական արոտավայրերն ու խոտհարքները:

Համայնքի գույքի և ռեսուրսների արդյունավետ կառավարումն ապահովելը համայնքի առաջնահերթ խնդիրներից մեկն է: Այս խնդիրը լուծելու գործիքներից մեկը կարող է լինել տվյալների էլեկտրոնային շտեմարանը և դրա հիմքի վրա ստեղծված համացանցային բիզնես հարթակը. շտեմարանում առկա տվյալները՝ համայնքի գույքի, հողերի, ենթակառուցվածքների, ռեսուրսների վերաբերյալ, նոր բիզնես գաղափարների գեներացման աղբյուր կարող են դառնալ: Այն դրական ազդեցություն կունենա համայնքում գործարար միջավայրի զարգացման վրա, համայքի ուժեղ կողմերն ու հնարավորությունները ավելի շոշափելի, հասանելի ու օգտագործելի կդառնան:

6.6 Կարգավորման և ինստիտուցիոնալ շրջանակ

Տեղական մակարդակում կարգավորումների առումով ՏԻՄ-երը իրավասությունների բավականին սահմանափակ են: ՏԻ մարմինները իրենց իրավասությունների շրջանակում որոշակի ճկունություն կարող են ցուցաբերել տեղական տուրքերի և վճարների սահմանման հարցում՝ որոշ արտոնություններ սահմանելով նոր բացվող բիզնեսի համար:

Համայնքապետարանում ստեղծվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ, ինչի արդյունքում բարելավվել են համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների որակը: Չնայած արձանագրված առաջընթացին՝ դեռևս կան որոշ խնդիրներ:

6.7 Հմտություններ և մարդկային կապիտալ, ներառականություն

Համայնքի աշխատաշուկայի ձևավորման վրա մեծ ազդեցություն է թողնում տնտեսության բևեռացվածությունը. Պահանջարկը հիմնականում ինժեներատեխնիկական և ցածր որակավորում պահանջող մասնագիտությունների նկատմամբ է: Ոչ տեխնիկական մասնագիտություն ունեցող երիտասարդների համար համայնքում պատշաճ աշխատանք գտնելը հնարավոր չէ:

Համայնքում պետական արհեստագործական ուսումնարան է գործում, բայց այն իր գործառնական նշանակությանը չի ծառայում՝ որոկավորված արհեստագործների և բանվորների պատրաստում, մասնավորապես՝ լեռնահանքային արդյունաբերության համար: Պատճառը արտադրություն - կրթական ոլորտ թույլ կապն է ու ոլորտի իրավական կարգավորումների թերությունները:

Գյուղացիների գյուղատնտեսական հմտություններն ու գիտելիքները հեռու են բավարար լինելուց: Նրանց հմտություններն ու ունակությունները զարգացնելու դեպքում հնարավորություն կստեղծվի համայնքում փոքր գյուղատնտեսության զարգացման համար:

6.8 Արտաքին դիրքավորում և մարքեթինգ

Քաջարան համայնքը տասնամյակներ շարունակ արտաքին աշխարհին հայտնի է որպես լեռնահանքային արդյունաբերության խոշոր կենտրոն: Հաշվի առնելով հանքավայրում առկա պաշարները և հանքը շահագործող կազմակերպության՝ ԶՊՄԿ-ի գործունեության ծրագրերը, առնվազն 40-50 տարի համայնքի մասին այս ընկալումը կպահպանվի: Այս վիճակը որոշ առումներով բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքի դիրքավորման վրա, հատկապես համայնքի խոշորացումից հետո. հասարակությունը, զանգվածային լրատվամիջոցները, ինչու չէ,նաև պետական մարմինները համայնքն ընկալում են որպես էկոլոգիապես անբարենպաստ տարածք:

Խոշորացումից հետո համայնքի տարածքում են ընդգրկվել բարձրլեռնային էկոլոգիապես մաքուր գյուղական բնակավայրեր, ալպիական արոտավայրեր ու խոտհարքներ, հարուստ կենսաբազմազանությամբ ու բարձրարժեք լեռնաանտառային լանդշաֆտներ, տուրիստական երթուղիներ, պատմական արժեքավոր հնավայրեր և այլն: Այս առումով համայնքի կերպարը, նրա ընկալումը արտաքին աշխարհի կողմից փոփոխության կարիք ունի: Այն մեծ ջանքեր ու միջոցներ է պահանջում, բայց էապես կնպաստի տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը և համայնքի տնտեսության դիվերսիֆիկացմանը:

Համայնքը չունի մարքեթինգի ռազմավարություն, ինչպես նաև չեն իրականացվում համայնքի գովազդման մարքեթինգային արշավներ:

7. SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1. Հարուստ օգտակար հանածոների պաշարները՝ հատկապես պղնձամոլիբդենային 2. Բարձր արժեք ներկայացնող բնական լանդշաֆտների և հարուստ անտառային կենսաբազմազանության առկայությունը 3. Ալպիական արոտավայրերի և խոտհարքների առկայությունը 4. Պատմական հուշարձանների առկայությունը 5. Խոշոր արդյունաբերական ձեռնարկության առկայությունը, որը նաև համայնքի ամենախոշոր գործատուն է 6. Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համեմատաբար մեծ ներկայացվածությունը 7. Բնակչության եկամուտների համեմատաբար բարձր մակարդակ 8. Համայնքապետարանի՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության դրական փորձն ու ունակությունները, հատկապես, համայնք- ԶՊՄԿ փոխշահավետ համագործակցություն 9. Մեկ պատուհանի սկզբունքով աշխատող քաղաքացիների սպասարկման գրասենյակ	1. Համայնքի գլխավոր հատակագծի բացակայությունը 2. Համայնքի տնտեսության միաբևեռ բնույթը՝ պայմանավորված տնտեսության մեջ մեկ խոշոր ձեռնարկության գերակա դիրքով 3. Փոքր և միջին բիզնեսի թույլ ներկայացվածությունը 4. Բնակիչների հասարակական ցածր ակտիվությունը 5. Երիտասարդների բազմակողմանի զբաղվածության և ժամանցային վայրերի բացակայությունը 6. Ինժեներական ենթակառուցվածքների և հիմնական ֆոնդերի մաշվածությունը 8.Համայնքային կենտրոնի էկոլոգիական համեմատաբար անբարենպաստ վիճակը 9. Գյուղական բնակավայրերի թերբնակվածությունը 10. Եղանակային անբարենպաստ պայմանները 11. Ռելիեֆի կտրտվածությունը և վարելահողերի փոքր չափերը
Հնարավորություններ	**Վտանգներ/սպառնալիքներ**
1. Մեղրիում ձևավորվող ազատ տնտեսական գոտու մոտիկությունը 2. Հարկային արտոնությունների առկայությունը՝ որպես սահմանամերձ և բարձրլեռնային համայնք 3. Տարածաշրջանին առնչվող պետական խոշոր ծրագրերի առկայությունը (Հյուսիս – հարավ մայրուղու կառուցում, պոչամբարներում կուտակված պոչանքների վերամշակման ծրագիր) 4. Արդյունաբերական պոտենցիալի բազայի օգտագործում նորարարական արտադրությունների հիմնելու համար 5. Արդյունաբերական բազայի օգտագործում ձեռնարկությանը մատակարարող կամ ծառայություններ առաջարկող փոքր ձեռնարկությունների հիմնման համար	1. Համայնքի տնտեսության միաբևեռությունը 2. Լեռնահանքային ձեռնարկությունների գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա 3. Բնական աղետների և էկոլոգիական ռիսկերի բարձր մակարդակը. 4. Համայնքաստեղծ ձեռնարկության փակվելը կամ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելը 5. Օրենքների հաճախակի փոփոխությունները 6. ՏԻՄ լիազորությունների անբավարարությունը խնդիրների լուծման համար

8. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի տեսլականը՝

Քաջարանը բնության վրա նվազագույն բացասական ազդեցություն ունեցող, բարձր տեխնոլոգիական հանքարդյունաբերություն, զարգացող փոքր և միջին ձեռնարկություններ, էկոհամակարգային ծառայություններ մատուցող բազմաբնակավայր համայնք է, որտեղ մարդիկ կարող են գտնել արժանապատիվ աշխատանք և զբաղմունք, ապրում են հարմարավետ և առողջության համար անվտանգ բնակավայրերում:

Գլխավոր նպատակներն են՝

1. Համայնքային գույքի և ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը և դրանց վերաբերյալ տվյալների պոտենցիալ ներդրողների համար մատչելիության ապահովում

2. Փոքր և միջին ձեռներեցության ակտիվության աճ, հատկապես կանանց և երիտասարդների շրջանում

3. Նպաստել գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների զարգացմանն ու աճին

9. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Աղյուսակ 2.

Հիմնայու ներ	*Հիմնական նպատակներ*	*Գործողություններ / նախագծերի գաղափարներ*	*Տևողու թյուն (սկիզբ / ավարտ)*	*Մասնակից գործընկերներ*	*Գնահատված ծախս, Ազգային արժույթով (համարժեքը եվրոյով)*	*Մոնիտորինգի ցուցանիշներ/ Կարճաժամկետ արդյունքների ցուցիչներ և թիրախներ*	*Արդյունքներ/ Վերջնարդյունքի ցուցիչներ և թիրախներ*
Արտաքին դիրքավորում և մարքեթինգ Հող և ենթակառուցվածքներ	Բարձրացնել համայնքային գույքի, ռեսուրսների կառավարման արդյունավետության և դրանց վերաբերյալ տվյալների մատչելիության մակարդակը	1.1. Տեղեկատվական հարթակի ստեղծում համայնքապետարանում ԱՏՀ (GIS) համակարգչային ծրագրի ներդրմամբ	Մայիս 2020-Հուլիս 2020	ԵՄ, Քաջարանի համայնքապետարան	25000 եվրո	• Համայնքապետարանի ներքին համակարգչային ցանցում ներդրված ԱՏՀ	Համայնքում գործարարությամբ զբաղվել ցանկացողների տեղեկացվածության մակարդակը: Ծրագրային հավելվածից օգտվողների քանակը
		1.2. Համայնքային գույքի, ռեսուրսների գույքագրում, տվյալների շտեմարանի ստեղծում (քանակական, տեքստային, քարտեզագրական) և ներմուծում ԱՏ համակարգ: Դեպի շտեմարան ինտերնետային մուտքի ապահովում	Հուլիս2020 –Մայիս 2021	ԵՄ, Քաջարանի համայնքապետարան	16000 եվրո	Հավաքված, մշակված, համակարգված և քարտեզագրված տվյալներ համայնքային գույքի, առկա ռեսուրսների վերաբերյալ: Տվյալները ներմուծված են ԱՏ համակարգ և ապահովված է ինտերնետային մուտքը դեպի շտեմարան	
		1.3. Համայնքապետարանի աշխատակիցների վերապատրաստում:	Մայիս2020-Հուլիս 2020	Քաջարանի համայնքապետարան	4000 եվրո	• Համայնքապետարանի չորս աշխատակիցներ տիրապետում են տեղեկատվական համակարգերով աշխատելու ունակություններին ու հմտություններին	

Հմտություններ և մարդկային կապիտալ Ֆինանսական միջոցների հասանելիություն	2. Փոքր և միջին ձեռներեցության ակտիվության աճ, հատկապես կանանց և երիտասարդների շրջանում	2.1 Երիտասարդ ձեռներեցների աջակցման խորհրդի ստեղծում՝ ներգրավելով երիտասարդ ակտիվիստներին և տեղական ՀԿ-ների	Հունիս 2020	Քաջարանի համայնքապետարան տեղական ՀԿ	Առանց ֆինանսավորման	• Երիտասարդ ձեռներեցության զարգացման հարցերի օրակարգի ձևավորում • Մշտական գործող պլատֆորմ երիտասարդ ձեռներեցության հարցերի քննարկման համար	• Երիտասարդների շրջանում ձեռնարկատիրական ակտիվության աճ • Նոր սկսնակ ձեռնարկությունների թվաքանակի աճ • Նոր ստեղծված աշխատատեղեր • Ինժեներական կրթության խրախուսում
		2.2 Երիտասարդ ձեռներեցության թեմայով սեմինարների և դասընթացների կազմակերպում	Սեպտեմբեր 2020 - մարտ 2021	Քաջարանի համայնքապետարան տեղական ՀԿ	7,500 եվրո Առնվազն 5 սեմինար/ դասընթաց	• Առնվազն 5 սեմինար/ դասընթաց • Առնվազն 20 ակտիվ մասնակից • Առնվազն 10 մշակված նոր բիզնես գաղափարներ	
		2.3 Լավագույն բիզնես գաղափարի տարեկան մրցույթի անցկացում երիտասարդ ձեռներեցների շրջանում (ներառյալ սկսնակները)	Մարտ - մայիս 2021	Քաջարանի համայնքապետարան տեղական ՀԿ Ֆինանսական հովանավոր	5,000 եվրո 1,500 եվրո՝ կազմակերպչական ծախսեր 3,500 եվրո՝ մրցանակային ֆոնդ	• Մշակված մրցույթի կազմակերպման կանոնակարգ • Ձևավորված մրցութային հանձնաժողով • Մրցույթի մասին տեղեկացվածության ապահովում (հայտարարություններ և տեղեկատվական միջոցառումներ) • 10-15 հայտերի ստացում • 1-3 ֆինանսավորված ծրագիր	

		2.4 Համայնքի դպրոցներից մեկում ինժեներական լաբորատորիայի հիմնում (Արմաթ լաբորատորիա)	Մարտ - մայիս 2021	Քաջարանի համայնքապետարան Դպրոցի ղեկավարություն ԱՏԶՄ Ֆինանսական հովանավոր	10,000 Եվրո	• Ամբողջությամբ համալրված ուսումնական լաբորատորիա • Վերապատրաստված դասընթացավար • Տարեկան 30 աշակերտի ներգրավում	
Հմտություններ և մարդկային կապիտալ Հող և ենթակառուցվածքներ Ֆինանսական միջոցների հասանելիություն	3.Նպաստել գյուղացիական (ֆերմերային) տնտ. զարգացմանն ու աճին	3.1. Ուսուցողական և տեղեկատվական կենտրոնի հիմնում համայնքի գյուղական բնակավայրերից մեկում	Հունիս 2020-Օգոստոս 2021	ԵՄ, Քաջարանի համայնքապետարան	15,000 եվրո	• Ստեղծվել է ուսուցողա-կան կենտրոն 110 մ^2 տարածքով	• Համայնքում ստացվող բերքի քանակի աճ • Ընտանի կենդանիների գլխաքանակի աճ • Մշակվող վարելահողերի մակերեսի աճ • Գյուղացիական տնտեսությամբ զբաղվող ընտանիքների քանակ
		3.2. Գյուղատնտեսության ոլորտին առընչվող դասընթացների կազմակերպում, հմտությունների զարգացում և առաջխաղացման հնարավորությունների ստեղծում:	Օգոստոս 2020-Օգոստոս 2021	ԵՄ, Քաջարանի համայնքապետարան	60000 եվրո	• Տրամադրվում է 10 տեսակի դասընթաց, ներգրավված են 250 մարդ	
		3.3. Գյուղատնտեսական շուկայի կառուցում	Մայիս – Օգոստոս 2021	Քաջարանի համայնքապետարան Մասնավոր ներդրումներ, Պետական սուբվենցիա	200000 եվրո	• 500 մ^2 ընդհանուր մակերեսով գյուղատնտե-սական շուկայի կառուցում համայնքային կենտրոնում	

10. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ

Աղյուսակ 3

Միջոցառումներ	Գնահատված ծախսեր	Ֆինանսավորման աղբյուր				Ֆինանսավորման պակաս	Նշումներ
		Տեղական բյուջե	Պետական և ռեգիոնալ բյուջե	Ձեռնար կություններ	Դոնորներ		
1.1. Տեղեկատվական հարթակի ստեղծում համայնքապետարանում ԱՏՀ (GIS) համակարգչային ծրագրի ներդրմամբ	25000 եվրո	45%		5%	50%		
1.2.Համայնքային գույքի, ռեսուրսների գույքագրում, տվյալների շտեմարանի ստեղծում (քանակական, տեքստային, քարտեզագրական) և ներմուծում ԱՏ համակարգ: Դեպի շտեմարան ինտերնետային մուտքի ապահովում	16000 եվրո	10%			90%		
1.3.Համայնքապետարանի աշխատակիցների վերապատրաստում:	4000 եվրո	30%	40%		30%		
2.1 Երիտասարդ ձեռներեցների աջակցման խորհրդի ստեղծում՝ ներգրավելով երիտասարդ ակտիվիստներին և տեղական ՀԿ-ների	Առանց ֆինանսավորման						
2.2 Երիտասարդ ձեռներեցության թեմայով սեմինարների և դասընթացների կազմակերպում	7,500 եվրո Առնվազն 5 սեմինար/ դասընթաց	1 %			99%		
2.3 Լավագույն բիզնես գաղափարի տարեկան մրցույթի անցկացում երիտասարդ ձեռներեցների շրջանում (ներառյալ սկսնակները)	5,000 եվրո 1,500 եվրո կազմակերպչական ծախսեր 3,500 եվրո մրցանակային ֆոնդ	20%		50%	30%		

2.4 Համայնքի դպրոցներից մեկում ինժեներական լաբորատորիայի հիմնում (Արմաթ լաբորատորիա)	10,000 Եվրո	10%	30%	20%	40%		
3.1.Ուսուցողական և տեղեկատվական կենտրոնի հիմնում համայնքի գյուղական բնակավայրերից մեկում	15,000 եվրո	30%		20%	50%		
3.2. Գյուղատնտեսության ոլորտին առընչվող դասընթացների կազմակերպում, հմտությունների զարգացում և առաջխաղացման հնարավորությունների ստեղծում:	60,000 եվրո	20%			80%		
3.3 Գյուղատնտեսական շուկայի կառուցում	200,000 եվրո	20%	40%	40%			

11. . ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Աղյուսակ 4

Գործողություններ/ Նախագծերի գաղափարներ	**Տևողություն (սկիզբ /ավարտ)**	**Ակնկալվող արդյունքներ 1-6 ամիսներ**	**Ակնկալող արդյունքներ 6-12 ամիսներ**	**Ակնկալող արդյունքներ 12-18 ամիսներ**	**Ակնկալող արդյունքներ 18-24 ամիսներ**
1.1. Տեղեկատվական հարթակի ստեղծում համայնքապետարանում ԱՏՀ (GIS) համակարգչային ծրագրի ներդրմամբ	Մայիս 2020-Հուլիս 2020	• Կոնցեպցիայի մշակում	• Տեղեկատվական հարթակի շահագործում	-	-
1.2.Համայնքային գույքի, ռեսուրսների գույքագրում, տվյալների շտեմարանի ստեղծում (քանակական, տեքստային, քարտեզագրական) և ներմուծում ԱՏ համակարգ: Դեպի շտեմարան ինտերնետային մուտքի ապահովում	Հուլիս 2020 – Մայիս 2021	-	• Աշխատանքային թիմի ստեղծում • Գույքագրման աշխատանքների սկիզբ	• Շտեմարանի ստեղծման ավարտական աշխատանքներ	• Ինտերնետային մուտքի ապահովման աշխատանքներ
1.3.Համայնքապետարանի աշխատակիցների վերապատրաստում:	Մայիս2020-Հուլիս 2020	• 1 մասնագիտական վերապատրաստման դասընթաց	• 1 մասնագիտական վերապատրաստման դասընթաց	-	-
2.1 Երիտասարդ ձեռներեցների աջակցման խորհրդի ստեղծում՝ ներգրավելով երիտասարդ ակտիվիստներին և տեղական ՀԿ-ների	Հունիս 2020	• Խորհրդի կազմի ընտրություն • Հանդիպում-քննարկումներ սկսնակ բիզնեսների հետ	• Հանդիպում-քննարկումներ սկսնակ բիզնեսների հետ • Բիզնես խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում	• Հանդիպում-քննարկումներ սկսնակ բիզնեսների հետ	• Հանդիպում-քննարկումներ սկսնակ բիզնեսների հետ • Բիզնես խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում

2.2 Երիտասարդ ձեռներեցության թեմայով սեմինարների և դասընթացների կազմակերպում	Սեպտեմբեր 2020-մարտ 2021	-	• 1բիզնես դասընթաց սկսնակ ձեռներեցների համար	• 1բիզնես դասընթաց սկսնակ ձեռներեցների համար	-
2.3 Լավագույն բիզնես գաղափարի տարեկան մրցույթի անցկացում երիտասարդ ձեռներեցների շրջանում (ներառյալ սկսնակները)	Մարտ-մայիս 2021	-	-	• Լավագույն բիզնես գաղափարի տարեկան մրցույթի կազմակերպում	-
2.4 Համայնքի դպրոցներից մեկում ինժեներական լաբորատորիայի հիմնում (Արմաթ լաբորատորիա)	Մարտ-մայիս 2021	-	-	• Արմաթ լաբորատորիայի ստեղծման աշխատանքներ	-
3.1.Ուսուցողական և տեղեկատվական կենտրոնի հիմնում համայնքի գյուղական բնակավայրերից մեկում	Հունիս 2020-Օգոստոս 2021	• Ներդրումային ծրագրի մշակում և նախագծի պատրաստում • Ֆինանսների հայթայթում	• Շինարարության մրցույթի անցկացում	• Շինարարության իրականացում	• Ենթակառուցվածքի շահագործում
3.2. Գյուղատնտեսության ոլորտին առընչվող դասընթացների կազմակերպում, հմտությունների զարգացում և առաջխաղացման հնարավորությունների ստեղծում:	Օգոստոս 2020-Օգոստոս 2021	-	• Իրականացվում են դասընթացի նախապատրաստական աշխատանքները: Հաստատվել է մասնակիցների ցանկը: • Դասընթացի 1-ին փուլի անցկացում	• Դասընթացի 2-րդ փուլի անցկացում	• Դասընթացի 3-րդ փուլի անցկացում
3.3 Գյուղատնտեսական շուկայի կառուցում	Մայիս – Օգոստոս 2021	-	-	• Շինարարության իրականացում	• 500 մ2 ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական շուկա համայնքային կենտրոնում

Հավելված 1

Աշխատանքային խումբ

Կազմակերպություն	**Ներկայացուցչի անուն, ազգանուն**	**Պաշտոն**
Համայնքապետարան	Գարեգին Գաբրիելյան	ՏՏՋ պատասխանատու
Համայնքի ավագանի	Էրիկ Սաղաթելյան	Ավագանու անդամ
Համայնքի ավագանի	Կարինե Մակիյան	Ավագանու անգամ
ԷԳԿ Կենի ՀԿ	Լեոնիկ Հարությունյան	ՀԿ ներկայացուցիչ
Գործարար հատված	Արամ Հակոբյան	Միջին բիզնեսի ներկայացուցիչ, «Ապառաժ մայնինգ»
Գործարար հատված	Վասիլ Գրիգորյան	Փոքր բիզնեսի ներկայացուցիչ, գյուղատնտես, անհատ ձեռներեց

Հավելված 2

ՏՏՋ պլանավորման ընթացքում իրականացված հանդիպումների ցանկ

Հանդիպման ամսաթիվ, Վայր	**Հանդիպման մասնակիցներ**	**Հանդիպման թեմա**
Ք.Քաջարան, Համայնքապետարան	*Քաջարան համայնքի ղեկավար* *Քաջարանի համայնապետարանի ՏՏՋ պատասխանատու* *Վարչական շրջանների ղեկավարներ* *Ավագանու անդամներ* *Անհատ ձեռներեցներ* *Համայնքի ակտիվ երիտասարդներ* *ՀԿ ներկայացուցիչներ, (Լ. Հարությունյան, Ա.Աբրահամյան)*	*«Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրի ներկայացում: ՏՏՋ պլանի կազմման նպատակների և մշակման քայլերի ներկայացում:*
Ք.Քաջարան, Համայնքապետարան	*Քաջարան համայնքի ղեկավարի տեղակալ* *Քաջարանի համայնապետարանի ՏՏՋ պատասխանատու* *Համայնքի ակտիվ երիտասարդներ* *ՀԿ ներկայացուցիչներ* *Ավագանու անդամներ* *Տեղական բիզնեսի ներկայացուցիչներ*	*Աշխատանքային խմբի կազմավորում:* *Քննարկվել է աշխատանքային խմբի գործողությունները*
գ. Ձագիկավան Ձագիկավանի միջնակարգ դպրոց	*Քաջարան համայնքի ղեկավարի տեղակալ* *Քաջարանի համայնապետարանի ՏՏՋ պատասխանատու* *Համայնքի ակտիվ երիտասարդներ* *ՀԿ ներկայացուցիչներ,* *Գյուղացիներ*	*Կատարվել է տեղական տնտեսության կառուցվածքի, հիմնասյուների վերլուծություն:*

գ. Գեղի Վարչական կենտրոն	*Քաջարան համայնքի ղեկավարի տեղակալ* *Քաջարանի համայնապետարանի ՏՏՀ պատասխանատու* *Համայնքի ակտիվ երիտասարդներ* *ՀԿ ներկայացուցիչներ,* *Ավագանու անդամներ* *Տեղական բիզնեսի ներկայացուցիչներ* *Գյուղացիներ, ֆերմերներ*	*Կատարվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն: Համայքնի տեղական տնտեսական զարգացման թիմը սահմանել է համայնքի տեսլականը և նպատակները:*
ք.Քաջարան, Համայնքապետարան	*Քաջարան համայնքի ղեկավար* *Քաջարանի համայնապետարանի ՏՏՀ պատասխանատու* *Վարչական շրջանների ղեկավարներ* *Ավագանու անդամներ* *Տեղական բիզնեսի ներկայացուցիչներ* *Համայնքի ակտիվ երիտասարդներ* *ՀԿ ներկայացուցիչներ*	*ՏՏՀ պլանի վերջնական քննարկում և ներկայացում*